№ 12. Մարտի 29. — 1873 — Մարտի 29 № 12.

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԳԻՆԸ՝

Տարեկան գինն է 5 ռուբլի (փոստի ծախսով): Օտարաքաղաքացի բաժանորդները պիտի դիմեն այս հասցէով. Въ Тифлисъ. Въ Редакцію Армянской Газеты „Мшакъ“.

Թերթասում կարելի է ստորագրվիլ խմբագրատան մէջ (սրծրոցնու առն) և պ. Գատուրեանցի խանութում:

ՄՇԱԿ

ՑԱՑՏԱՐԱԲՈՒԹԵԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ՝

Մասնաւոր յայտարարութիւն տպել տուողը պիտի վճարէ 10 հասարակ տառի համար 1 կոպէկ արժէք: Յայտարարութիւններ տպվումեն Հայերէն, Ռուսերէն, Վրացերէն, Ֆրանսիարէն, Գերմաներէն և Թուրքերէն:

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մինը ամէնքի համար, ամէնքը մինի համար՝ — Ներքին տեսութիւն՝ Վրաց «Դրօշակ» լրագիր՝ Նամակ Զաքաթալից՝ Նամակ Ղարայից՝ Նամակ Շամախուց՝ Յովսէփ Էֆէնդեանցի հոգեհանգիստ՝ Ներքին լուրեր՝— Արտաքին տեսութիւն՝ Շվէյցարիա՝ Ամէրիկա՝ Իտալիա՝ Նամակ Պարսկաստանից՝ Նամակ Ցիւրիխից՝— Խառն լուրեր՝— Առևտրական՝ — Յայտարարութիւններ՝

ՄԻՆԸ ԱՄԷՆՔԻ ՀԱՄԱՐ ԱՄԷՆՔԸ ՄԻՆԻ ՀԱՄԱՐ

„Մշակի“ անցեալ համարներից մինի մէջ մենք աշխատել էինք նկարագրել մեր գիւղական ազգաբնակութեան անմխիթար դրութիւնը: Մի և նոյնը կարելի է ասել շատ փոքր զանազանութեամբ և մեր քաղաքի մանր արհեստաւորների վերաբերութեամբ: Դորանից յետոյ ինքն ըստ ինքեան ծագումէ հարցը չի՞ կարելի արդեօք որ և իցէ կերպով օգնել նոցան: Այդ հարցին կարելի է լսել զանազան պատասխաններ. հարկաւոր է մեր գիւղերում բանալ կանոնաւոր ուսումնարաններ, ծանօթացնել գիւղացոց երկրի մշակութեան և արհեստների առաւել լաւ ձևերի հետ, նոցա նահապետական գործիքները փոխարինել առաւել լաւ, կատարելագործուած մեքենաներով և այլն: Դորա բոլորն էլ գեղեցիկ բաներ են, բայց այս բոպէիս նոքա հասկանալի են միայն մասնաւոր անձանց զոհաբերութիւններով՝ որոնք շատ հազուագիւտ երևոյթներ են մեզանում, իսկ ընդհանուրի համար նոքա կը մնան անհասկանալի, նայելով նոցա անտեսական դրութեանը, որ կարօտ է հիմքից վերանորոգուելու: Ուրեմն խնդիրը նորանումն է, թէ չի՞ կարելի արդեօք նոցան օգնել իւր ներկայ դրութեան մէջ:

Մի ժամանակ (մասամբ և այժմ) Եւրոպայի աշխատող դասը տասնապատիկ աւելի վատ դրութեան մէջ էր քան թէ մեր՝ Փոքրաթիւ, բայց նիւթական այժ ունեցող մարդիկ ճնշում, հարստահարումէին աւելի բազմաթիւ, բայց չքաւոր դասը, որի քրտինքը թափվումէր միայն առաջինների գրպանները լցնելու համար: Ամենաւելի միջոցը այդ դրութենից ազատուելու համար նոքա դտան զանազան ընկերակցութիւնները, որոնք թէև ոչ յանկարծ, բայց հաստատ ու ապահով քայլերով տանումեն դէպ՝ի իւրեանց նպատակը,—չքաւոր բայց բազմաթիւ դասի բարօրութիւնը:

Թէ որքան օգտաւէտ են այդպիսի ընկերութիւնները, կարելի է տեսնել այն ընդհանուր գործադրութիւնից, որ նոքա դտան Եւրոպայում: Այստեղ համարեա բոլոր ակրութիւնների մակերևոյթները ցանցերի նման պատումեն նոքա այսօր: Այս բոպէիս Գերմանիայում հաշվումեն 1500-ից աւելի միայն փոխատու ընկերութիւններ: Նոյնը կարելի է ասել և միւս ակրութիւնների վերաբերութեամբ: Ռուսաստանում արդէն եղել են առաջին յաջող փորձերը ժողովրդի պիտոյքներին կատարելապէս համապատասխանող գիւղական փոխատու ընկերութիւններ հիմնելու, (թւով 40-ից աւելի մինչև 1872 թ.) որովհետև մինչև այժմ եղած գաւառական բանկերը թէև շատ բազմաթիւ էին (2—3 հազար) բայց պաշտօնական ձև ունենալով չէին կարողանում հասնել իւրեանց բուն նպատակին: Մենք լսում ենք, որ մեր հարևան վրացոց մէջ արդէն զարթել է այդ միտքը և նոքա շուտով ունենալու են մի ընկերութիւն քաղաքի արհեստաւորների մէջ:

Այդքան բազմաթիւ փորձերից յետոյ, որոնք զանազան կլիմաների տակ, զանազան հանգամանքներում հաստատում են մի և նոյն միտքը, թէ գիւղական փոխատու ընկերութիւնները համարելու է ամենալաւ միջներից մինը ժողովրդի տնտեսական դրութիւնը բարձրացնելու համար, անկարելի է այլ ևս կասկածել նոցա օգտակարութեան մէջ, նամանաւանդ, որ մենք շահուելով ուրիշ ազգերի երկարամեայ փորձերից կարող ենք չը կրկնել այս սխալները, որոնք անտարակոյս պատահելու էին առաջին փորձերի ժամանակ: Այդ իսկ պատճառով „Մշակի“ անցեալ համարներում առաջարկուեցաւ մի հատընտիր կանոնագրութիւն, որ շատ փոքր փոփոխութիւններով կարող է յարմարուել մեր կեանքին: Թէպէտ նոյն լրագրի այս և անցեալ տարեգնացքում եղել են այս նիւթին ուղղակի կամ կողմնակի վերաբերող յօդուածներ, բայց նա այնքան նոր է մեր ժողովրդեան համար, որ մենք աւելորդ չենք համարում դարձեալ բացատրել նոցա բուն նպատակն և էութիւնը:

Ասենք մի գիւղացի 3 մանէթի յորեն առաւ, ցանեց և հունձը ծախելուց յետոյ ստացաւ 15 մանէթ: Այդ 15 մանէթը արդիւնք էր այն 3 մանէթի, որով նա յորեն առաւ և այն աշխատանքի, որ նա գործ դրեց դորա վերայ: Մի արհեստաւոր մանէթուկէսի կաշի առաւ, կօշիկ կարեց և ծախեց 4 մանէթով: Այդ չորս մանէթը նոյնպէս արդիւնք էր այն մանէթուկէսի, որով նա կաշի առաւ և այն աշխատանքի որ նա գործ դրեց դորա վերայ: Այդպէս էլ շատ դէպքերում մի բան արդիւնաբերելու համար բացի երկու սկզբնական գործիչներից՝ բնութեանից ու աշխատանքից, հարկաւոր է և երրորդը.—կապիտալը, որ առաջին երկուսի արդասիքն է: Մեր չքաւորութեան գլխաւոր արմատը նորանումն է, որ շատ անգամ առողջ, աշխատելու եռանդ և բոլոր յարմարութիւններն ունեցող մարդը, ապրելով առատ, բերրի բնութեան մէջ, ստիպուած է լինում անգործ ապրելի թողնել իւր ուժերը, որովհետև չունի դորա համար անհրաժեշտ երրորդ միջոցը՝ կապիտալ: Շատերը տեսած կը լինեն այսպիսի օրինակ. մի գիւղացի, որ հաստատ համոզուած է, թէ ամբողջ ձմեռը ոտյոր գործութիւն անելով կարող է 50—60 մանէթ փող աշխատել, շատ անգամ ստիպուած է լինում ոտները ծալած տանը նստել, որովհետև չունի անհրաժեշտ 25—30 մանէթը ձի ու սայլ գնելու համար:

Ի՞նչ անէ նա. դիմէ քաղաքական կամ հասարակական բանկերին՝ նրանից դրաւ կը պահանջեն. իսկ այդ պահանջը չի կարող լուցանել նոա աղքատիկ խրճիթը: Մասնաւոր մարդիկ որքան էլ լաւ կողմերից ճանաչի նորան, արձեալ չի կարող նորան գումար հաւատալ, որովհետև նա իբրև մարդ միշտ ենթակայ է պատահարներին այսօր առողջ է, վաղ կարող է ոտները ձգել. հետևաբար նեղտիպուած է կամ բոլորովին մերժել նորա և կամ այնպիսի սարսափելի տոկոսներ նշանակել, որոնց տակ նա երբէք չի կարող վերականգնել, այլ աւելի կը խրուի պարքի մէջ: Այդ կերպով ուրեմն, 'ի զուր տեղը կորչում է մի ոյժ, որ կարող է օգուտ տալ իւրեանց և հասարակութեանը: Հա այդպիսի կարքաւորներին, որոնք արդիւնաբերելու ամենարմարութիւններն ունեն բացի դրամագլխից, միջոց տալ չափաւոր տոկոսներով փող ձեռք բերելու,—է գիւղական փոխատու ընկերութիւնների խնդիրը:

Այդ խնդիրը երկար ժամանակ երևումէր անլուծանելի, վերջապէս փոխադարձ պատասխանատուութեան մեծ սկիզբը փառաւոր վճիռ տուել նորան: Այդ սկիզբը կայանումէ հետևեալում. քանի մի մարդիկ, որոնք զգում են փոդի ասդրատծշտութիւնը իւրեանց գործունէութեան համար, հաւաքվում են միասեղ և գումար են փոխ ուզում մի տեղից այն պայմանով, որ նոցանից ամէն մինը պատասխանատու է իւր ընկերոջ հասցրած վնասի համար: Այդ պատասխանատուութիւնը լինում է նիւթական և բարոյական. Նիւթականը կայանումէ նորանում, որ ընկերութեան բոլոր անդամները իւրեանց ունեցած-չունեցածով պատասխանատու են գումարի այն մասի համար որ իւրեանց ընկերը չի կարող վճարել: Բայց դա երկրորդական տեղ է բռնում, որովհետև ընկերութեան անդամները կարող են բոլորովին սեփականութիւն չունեցող մարդիկ լինել և հենց այդպէսներին օգնելու համար է, որ հիմնվումէ ընկերութիւնը: Գլխաւոր գրականը այստեղ բարոյական երաշխաւորութիւնն է. անդամները ընտրվումեն ոչ թէ նոցա կարողութեանը, այլ անձնական յատկութիւններին նայելով, իսկ երբ աշխատող, գործին հմուտ մարդը գումար էլ ունի իւր ձեռքին, նա այնպէս կը շահեցնի նորան, որ հեշտութեամբ կարող է վճարել թէ իւր պարտքը և թէ նորա շահը: Մնում են միայն անակնկալ դիպուածները (հիւանդութիւն, վաղաժամանակեայ մահ և այլն), բայց դոքա անկարելի է, որ ամբողջ ընկերութեանը միասին պատահէին. եթէ պատահեն անդամ մինին կամ երկուսին, շատ զգալի չի լինիլ միւսների համար բաժանել այդ վնասը միմեանց մէջ:

Ուրեմն, էական տարբերութիւնը ընկերութեան և առանձին անհատի մէջ կայանումէ նորանում, որ առաջինում փոխադարձ պատասխանատուութիւնը մինի ամէնքի համար և ամէնքի մինի համար ներկայացնումէ մի այնպիսի գրաւական կառավարութեան կամ մասնաւոր անձի առաջը, որ սոքա կարող են փոխ տալ նորան առանց կասկածելու իւրեանց գումարի կամ սորա շահի ամբողջապէս յետ ստանալու մասին:

Մենք կարծումենք, որ բաւական պարզեցինք այդ ընկերութիւնների նպատակը և նոցա գլխաւոր հիմքը՝ փոխադարձ երաշխաւորութիւնը (կրուգովայա պորուկա): Մի բան միայն ցաւալի է, որ մեր ձայնը չի հասնելու այն դասի ականջին, որ իսկապէս կարօտ է նորան և որի համար յատկապէս գրուած է նա, որովհետև նա միջոց չունի ոչ լրագիրներ ստանալու և ոչ նոցա կարդալու: Այն անձինքը, որոնք գտնուելով գիւղերում մի և նոյն ժամանակ միջոց ունեն հետևել մեր լրագրութեանը, մեծ ծառայութիւն արած կը լինէին ընդհանուրին, եթէ միւս գիւղացոց մօտ կարդային կամ նոցա մէկնէին այս գործի էութիւնը: Մենք կարծումենք, որ այս ուղղակի պարտականութիւն պէտք է կազմի մեր գիւղական հասկացող քահանայից համար, իբրև մինը այն միջոցներից, որոնք վերաբերում են իւրեանց ժողովրդի բարօրութեանը: Իսկ եթէ այդպիսի անձինք մեր առաջարկած կանոնագրութեան մէջ դարձեալ կը գտնեն անհասկանալի կամ տեղական պայմաններին անյարմար տեղեր, կարող են դիմել դէպ՝ի „Մշակի“ խմբագրութիւնը, որ և ուրախութեամբ կը պատասխանէ նրանց մասնաւոր նամակներով կամ լրագրի միջնորդութեամբ:

Ժողովուրդը միշտ կասկածաւոր աչքով է նայում ամէն բանի վերայ, որ չէ բղխում նորա առօրեայ փորձից. հարկաւոր է արհեստականապէս դրդել նորան դէպ՝ի այն ճանապարհը, որով նա ինքը իւր յօժար կամքով կ'երթայ ապագայում՝ առաջինյաջող փորձերից յետոյ:

Ն. Լ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Առաջարկում ենք մեր ընթերցողներին վրաց „Դրօշակ“ լրագրի (№ 11) առաջնորդող յօդուածը համարելով նրան ուշադրութեան արժանի.

ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԵՒ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԸ

Ներկայ յօդուածի մէջ մենք կամենումենք կարճ կերպով յայտնել մեր կարծիքը վրաց հասարակ ժողովրդի և մեր վաճառականների մէջ եղած յարաբերութիւնների վրա: Մենք կարծումենք, որ այդ նիւթը անտեղի և տարաժամ չի երևայ ոչ ոքին, մանաւանդ այժմ, երբ մեր երկրի ամենաւաղ մասերից մինը տանջվումէ սովից, կարծումենք որ ոչ մի խոհեմ վաճառական չի տրտնջի մեր դէմ, եթէ այդ փոքրիկ յօդուածում մենք մի քանի կարական դատողութիւններ կը յայտնենք նրանց եղբայրակիցների մասին:

Ամբողջ աշխարհում չէ կարելի գտնել մի ազգ, որի անդամները միմեանցից լիապէս բաւական լինէին: Մարդի կեանքը դժբաղդապէս այնպէս է ստեղծած, որ հասարակութեան մի մասը գրեթէ ամեն տեղ անբաւական է նոյն հասարակութեան միւս

մասից: Եւ այդ անբաւականութիւնը գրեթէ միշտ ունի իր հիմնական պատճառները:

Այդպէս է կեանքը Եւրոպայում: Այդ անբաւականութիւնը հասարակութեան այլ և այլ մասերի մէջ, թէև աւելի փոքր չափով, կայ և մեզանում: Առ այժմ գործարանները, ֆաբրիկաները և մեծ կապիտալիստները մեզանում քիչն են թիւով, Աստուծու ողորմութեամբ մենք չունենք և այն ամէն կայքից զրկված շինականների դասը, որ Եւրոպայում կազմում է պրոլէտարիատ անուանված դասը: Ուստի և վերև յիշված անբաւականութիւնն էլ մեզանում պիտի յայտնվի ուրիշ ձևով, ուրիշ կերպարանք պիտի ունենայ:

Արդարև, մենք տեսնում ենք, որ մեզ մօտ անբաւականութիւնը յայտնվում է զլխաւորապէս գիւղական և քաղաքային ազգաբնակութեան մէջ, մի կողմից մանր վաճառականների, իսկ միւս կողմից մանր արդիւնաբերողների մէջ: Անտարակոյս մեր ժողովրդի դրութեան հետ ծանօթ անձինքը յաճախ լսած են նորանից դառն խօսքեր և անբաւականութեան արտայայտութիւն մեր վաճառականների դէմ:

Կովկասի ամէն քաղաքներում վաճառականները հանդիսանում են որպէս տիրապետող դասը: Բոլոր անշարժ կայքերը նրանց են պատկանում: Այդ երևոյթը նկատվում է ոչ թէ միայն քաղաքներում, բայց և փոքր աւաններում: Կարող էք հաւատի լինել, որ բոլոր գիւղացիների ամբողջ կայքը գտնվում է մի կամ երկու վաշխառու-վաճառականի ձեռքում, որք կամ նոյն տեղ են բնակվում, կամ մօտակայ քաղաքից ձեռնամուխ են լինում այդ գործին:

Հաստատ կարելի է ասել, թէ մեր գիւղացիների կալվածների կէսը, մանաւանդ Քարթալինիայում և Կախէթում, գրաւ դրած են այդ մանր վաճառականների մօտ, և եթէ այդ երևոյթին չեն առաջն առնի, շուտով և բոլոր նրանց կալվածները կանցնեն վաշխառուների ձեռքը: Մեր գիւղացիք խեղդված են պարտքերի մէջ, և պարտքը օրից օր աճում է: Ասում են, օրինակ որ Կիզլեցիք չէին գտնվի այս բօպէիս մի այնպիսի ողորմելի դրութեան մէջ, եթէ նրանք ունենային գոնէ մի կտոր հող որ գրաւ դրած չը լինէր: Այդ յայտնի մի իրողութիւն է, որ պարտատէր—վաճառականները հունձքի կամ քաղման ժամանակ առնում են ցորեան կամ գինի մի որ և է չնչին պարտքի հաշվով:

Մենք 'ի հարկէ չենք հաստատում, որ վաճառականներն են միայն մեր տնտեսական անկման պատճառ, բայց չենք կարող ուրանալ, որ մասամբ մեր առևտրական դասը ունէր և այժմ ունի մի յայտնի ներգործութիւն այդ անկման վերա:

Տնտեսական դրութեան բարելաւացնելու միջոցները, ինչպէս ամէն ազգի մէջ, ընդհանրապէս յայտնի են, այն է՝ ժողովրդական լուսաւորութիւն, և աշխատանքի աւելի կանոնաւոր կազմակերպութիւն:

Ս. Մ.

ՆԱՄԱԿ ԶԱՔԱԹԱԼԻՑ

«Մշակի» 8-դ համարում մեք կարդացինք ներքին լուրերի մէջ Հայ և Վրաց գիւղատնտեսական լրագրաց վերաբերութեամբ մի ծանուցումն, որով յայտնում էք թէ խմբագրութիւնը իր վերա է առնում ըստ կարելոյն չափ լրացնել հայոց գիւղատնտեսական թերթի պարտաւորութիւնը, այդ ծանուցումն մեզ տեղիք տուեց հաղորդելու Ձեզ մի քանի տեղեկութիւն, որ եթէ արժան կհամարէք խընդրեմ հրատարակել Ձեր սիրելի լրագրի միջոցաւ:

Անցեալ տարի փորձի համար Զաքաթալայ քաղաքի մէջ պ. Ի. Ղ. ցանեց ամերիկայի ծխախոտի սէրմից (դ ը ե ուբ էք). ժողոված ծխախոտը բաւականին լաւ էր և ծխողներն հաստատում էին որ պատվական ծխախոտ է: Այնտեղ Նահանգում նմանապէս Լեզգիներն ցանում են ծխախոտ, բայց նոցա ցանածը աւելի հասարակն է և հետևողութիւնն բոլորովին անկանոն, նոքա ցանելուց յետոյ ածուներում թողում են այնպէս մինչև մեծանում են թերթերն և հասնելուց յետոյ ժողովում են ու չորացնում արեգակի և միշտ ցանած սերմն լինում է տեղական:

Այս տարի պ. Ղ. դարձեալ ադիր է ցանելու ծխախոտ, բայց աւելի մեծ որչութեամբ, ուստի վարձել է մի դեսեատին հող և արդէն մշակում են. կարծիք չկայ որ նոր հետևողութիւնը աւելի կանոնաւոր կլինի. փորձը ցուցել որ այնտեղ կարելի է լաւ ծխախոտ ը. 1871 թվում Սիղնախու գաւառից ստացած ծխոտը աչխարհահանդէսում լաւ նշանակութիւնացաւ:

Զաքաթալու նահանգի հողվարերութիւնը և երկրի դրութիւնը խօստանում որ այնտեղից կարելի է լաւ ծխախոտ ստանալ. Այս երկիրը հիւսիսային կողմից պաշտպան լինելով Կովկասու մեծ լեռան գագաթներից, կարող է որ բոյսերը ենթարկվին հիւսիսային սառակար հողմի ներգործութեանը, այդ երկրումարելի է ունենալ մեծ ծխախոտի պլանտացիա. ծխախոտը պահանջում է շատ անգամ ջրել, մի ոչն ժամանակը պիտի լինի չոր երկիր. պէտք է մել որ այն նահանգի մի քանի գիւղերայքի հողերն ճախճախային է ինչպէս օրինակի համար Բաքանու հողը, ի հարկէ, այդ տեղեր ծխախոտը յաարող չէ լինել, բայց Կախու, Ալիբէկլուի, Ալիբաու, Մուխախի հողերը շատ յարմար են ծխոտ ցանելու: Ծխախոտի սէրմը ցանում են դաշտը մտնելուն պէս մինչև մարտի 15, որպէս զի ճիճուներն չի վնասեն ու չի ոչնչացնեն նոր բուսած բոյսին: Նախ հարկաւոր է չինել դեռնից գոնէ արշին բարձր մի ածու ու այնտեղ ցանել սերմ ի հարկէ, այն ածուն չորս կողմը ճիպոտով ցնկ քաշել ու մէջը աղբախառն հողով լեցնել. երբ բոյսը աճում է բաւականին, յայնժամ հարաւոր այնտեղից սածիլ (չիթիլ) անել պլանտացիայի (ազարաղ) համար պատրաստած ածուների մէջ, բոյսը աճելուն պէս աստիճանաբար պէտք է տրան գլուխներն խուզել որպէս զի տերևներն մեծանան ու զօրեղանան, ջրել հարկաւոր է շաբաթը երկու անգամ, իւրաքանչիւր բոյսի թփի վերա հարկաւոր է թողնել 10—12 տերևներ: Ցուլիս ամսոյ վերջերին երևում են տերևների վերա դեղին բծեր (լաքաներ)՝ այդ հասնելու նշաններն են, այդ տեսակ հասած տերևներն պէտք է իսկոյն ժողովել, եթէ կարելի է չորացնել նորանց չուաքում՝ աւ յատկութիւնը պահպանելու համար: Երկրորդ քաղաքը Հ-քաթալուս օգոստոսի վերջերին. իսկ երրորդի վերա ուշադրութիւն չի դարձրվաւ: Սորանից կարելի է եզրակացնել որ Ալիբէկլոյ կամ Կախ գիւղերայքում առաջին քաղն անկասկած կլինի Ցուլիսի կէսին, երկրորդը օգոստոսի 20-ին, իսկ երրորդը սեպտեմբերի վերջին: Զաքաթալու նահանգից ոչ հեռու Սիղնախու գաւառում Ղարաղաջ անուանեալ դաշտում պ. պ. Սաֆարեանցներն անցեալ 1862 թ. ցանել էին ծխախոտ կարծեաք քէօբէկ. բոյսը բաւականին աջող էր եղած, բայդ դեռ ևս չի հասած՝ մորեիը փչացրել էր բոլորովին, այնուամենայնիւ ժողովուած 20 փութոյ չափ ծխախոտը բաւականին լաւն է եղել բայց չափից դուրս զօրեղ (թունդ). ի հարկէ դա առաջինն երկրի պարարտութիւնից է և երկրորդ էլ որ քիչ տերևներ են պահած թփերի վերա: Այս տարի դարձեալ Սաֆարեանցներն մտադիր են ցանելու մի և նոյն տեղն ծխախոտ, տեսնենք ինչպէս կլինի, Ղարաղաջի դաշտը ենթակայ է հիւսիսային հողմին՝ կարծիք չկայ որ այնտեղ լաւ չէ կարող լինել ծխախոտը:

Ալէքսանդր Մէլիք-Փաշայեանց

ՆԱՄԱԿ ՂՈՒԲԱՅԻՑ

Ղուբան ունի երկու եկեղեցի՝ մէկը Հայոց մէկը Ռուսաց: Հայոց փոքրիկ և գեղեցիկ եկեղեցին շինուած է սրանից 17 տարի առաջ հանգուցեալ Տփխիսեցի Ստեփաննոս Անդրէասեան Լազարեանի ծախքով և սրա Հիւսիսային դրան առաջև ամփոփուած է այժմ այդ երջանկայիշատակ մարդու մարմինը գեղեցիկ յիշատակով: Ղուբայու հայը ի հարկէ այն ժամանակ թուով շատ փոքր էր, որ ինչպէս պատմում են երկու կամ երկք տուն հաղիւ կը լինէր, բայց յետոյ Ղուբի (երկրի) բերքը, պտղի առատութիւնը և օդտաւէտ առևտրականութիւնը շատերին յայտնի լինելով, շատ տեղերից աղքատ բնակիչներ սկսեցին գաղթել և Ղուբայում բնակուիլ. այդ գաղթականութիւնը մինչև օրս էլ շարունակվում է և մեծ մասամբ Ղարաբաղից և Շամախուց են լինում: Այժմ մեր եկեղեցին ժողովրդի թուին համեմատ բաւական փոքր է, ուստի ժողովուրդը մի քանի տարիներից յետոյ ստիպված պէտք է լինի մի նոր եկեղեցի էլ չինել:

Այս եկեղեցում պաշտօն են կատարում երկու քահանայք՝ սրանց կեանքի վերա նկարագրութիւն անելը կարծեմ աւելորդ կը լինէր, որովհետև մեր ժամանակում հոգևորականներն արդէն հասարակութեան ծանօթ են:

Մեր մինչև այժմ ուշադրութեան արժանի չեղած Հոգևոր դպրոցը որ իւր սկզբնաւորութիւնից չատ դանդաղ ընթացք էր ստացած, նոր նոր սկսել է թոյլ ու ծանր քայլերով յառաջ դնալ, որովհետև հոգաբարձուները, որ մինչև այս տարի անուանով էին միայն հոգաբարձու, այժմ փոքր ի շատէ սկսելն ուշ դարձնել ուսումնարանի վրա և երբեմն ուղղել նրա պակասութիւնը: Այս նոր շարժումնքն էլ մեզ չէին վստահացնել այս խօսքերը ասելու երբ նոր եկած պօլսեցի Կարապետեան Յակովը վարժապետի աչխատութեանց պտուղները չտեսնուէին չօչափելի կերպով: Ցոյս ունենք որ մեր խղճալու արժանի ժողովուրդը չուտով վերջապէս կհասկանայ ուսման անհրաժեշտութիւնը:

Դարբանդից գրում է մեզ պ. Շահիջանեանցը՝ տեղոյս թատրոնը այս տարի շատ յաջողակ անցաւ, ամէն մի գործողութիւն վերջանում էր ծափահարութեամբ և bis-երով: Հինգ ներկայացում տուին և իւրաքանչիւրից 120 ռուբլի օգուտ ստացուեցաւ:

Ուրախութեամբ լսում ենք որ տեղոյս երիտասարդներն էլ հետևելով Դարբանդու օրինակին, դիտաւորութիւն ունեն կազմել մի խումբ և եկող տարի մի քանի ներկայացումներ տալ, իսկ նրանից ստացած օգուտով հիմնել մի ընթերցարան: Այս բարենպատակ զգացմունքը մեծ ուրախութիւն պիտի պատճառէ մեր բոլոր հայ-հասարակութեանը:

Լսում ենք որ Բաքուայ մարդասիրական ընկերութեան նոր նախագահ է ընտրուել պ. Պաւլ Շամիլիչ Մէլիք-Բեկլարեանցը. բոլոր սրտով ցանկանում ենք նրան յաջողութիւն իւր սկսվածքում:

Մարտի 2-ին. Անտոն Մէլիք-Դատայեանց

ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽՈՒՑ

Անցեալ տարվայ մարտ ամիսը մեզանում երաշտութեամբ անցնելու պատճառով, թէ հայը և թէ այլ մթերքը, ինչպէս յայտնի է արդէն լրագիրներից, շատ թանդ գնով էր վաճառվում:

Նոյնը կարծես թէ սպասումէինք և այս տարի, նայելով մարտ ամսոյ առաջին տօթային, ջերմ օրերին, բայց յուրախութիւն առաւել չքաւոր դասին քաղաքի բնակչաց, մարտի 9-ից սկսած եղանակը, թէ քաղաքում և թէ նորա շրջակայքում ձիւնախառն և անձրևային է անցնում. Ապրիլի մանը, որ երկու օր դորանից առաջ ծախվում էր 70 կամ 80 կոպ.,—այժմ ծախվում է ամենալաւը՝ 35 և 40 կոպ.: Կարագ եղի ֆունթը առաջ ծախվում էր 35 կոպ., իսկ այժմ 16 կոպ.: Ամբարներում բաւականի մեծ դումարի ժողոված վաճառելու համար ցորեանը, այժմ վնասակար հետևանք է ունենում ցորեանատէրերի համար: Ես ականատես էի, որ մի քանի պարոններից մի քանի օր դորանից առաջ, խնդրումէին թաղար (50 ման.) ցորեանը 26 և 27 մանէթով, բայց նոքա չէին տալիս: Իսկ այժմ նոյն պարոնայք խնդրում են վաճառողներից առնել թաղարը 14 կամ 15 մանէթով, բայց վերջինները չեն մօտենում.

Մարտի 17. Ա. Մէլիք Շահնազարեանց

Ներսիսեան Հայոց Ազգային-Հոգևոր Դպրոցի Հոգաբարձութիւնը պարտաւորութիւն համարելով յարգել յիշատակը հանգուցեալ Յովսէփ Յովհաննիսեան Էֆէնդեանցի, կարգադրել է կատարել հոգեհանգիստ նորա գերեզմանի վրա, վանքի եկեղեցումը, առաջիկայ ապրիլ ամսոյ 15-ին, նոր կիւրակէ օրը, պատարագից յետոյ: Այս մասին յայտնում է Թիֆլիզոյ բարեպաշտ հասարակութեանը: Արժանայիշատակ Էֆէնդեանցը, իւր կենդանութեան ժամանակը, կտակաւ նուիրել է Ներսիսեան Հայոց Ազգային-Հոգևոր Դպրոցին նշանաւոր գումար, որի տոկոսիքը գործ է դրվում յօգուտ նոյն դպրոցի և Թիֆլիզոյ ծխական ուսումնարանների:

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

Վրաց «Դրօէբա» լրագիրը Սղնախի բնակիչների համար 131 ր. 40 կոպ. հաւաքելուց յետոյ, հասցրել է այդ գումարը Թիֆլիսի ազնուականների ներկայացուցչին:

* * *

Մեր խմբագրութիւնը չնորհակալութեամբ ստացաւ երկու հայ գրքոյկ՝ մէնը Թիֆլիսում հրատարակված պ. Ա. Նահապետեանից թարգմանված Բէօմէի մանկավարժական նամակները, միւսը պ. Զ. Մսերեանցից Մոսկվայում հրատարակվող «Փարոս» անունով բանասիրական գիտելեաց առաջին տետրը:

* * *

«Մեղու Հայաստանի» լրագիրը հաղորդում է որ մի քանի հայ օրիորդներ և երիտասարդներ գիտաւորութիւն ունեն ապրիլ ամսի վերջին տալ քաղաքիս ձմեռային թատրոնում բարեգործական նպատակով պ. Գ. Սունդուկեանցի դեռ չը ներկայացրած «Քանդած օճախ» կոմեդիան:

* * *

Ինչպէս յայտնի է մեր ընթերցողներին, առաջին պաշտօնական առաջարկութիւնը քաղաքային վարչութեան գազի և ջրանցքի մասին, արել է Շվարէնի, Ֆոն-Դէդէնի և Մոորի ընկերութիւնը, (որոնց այստեղի ներկայացուցիչն է պ. Բօգաչովը). Լսում ենք այժմ, որ վարչութիւնը ստացել է առաջարկութիւն մի նոր ընկերութենից, կազմված հետևեալ անձինքներից՝ ինժէնէր-պօլկովնիկ Դերսէվանով, գենէրալ-չտաբի պօլկովնիկ Ստէրնիցկի, ինժէնէր Զէդէման և անգլիացիք՝ Պրէտիմէն և Լօալ: Վերջինը փոթի-թիֆլիսեան երկաթուղու չինողներից մինն է (!):

* * *

Դարձնում ենք մեր ընթերցողների ուշադրութիւնը այն նոր ուղղութեան վրա, որ շուտով մրտնելու է ռուսաց բարձր կառավարութեան գործունէութեան մէջ կ օ ն ց է ս ի ա ն ե ր տալու կողմից: С. Пет. Вѣд. լրագրում կարդում ենք, որ ճանապարհների մինիստրութիւնը մշակել է այդ խընդրին վերաբերութեամբ մի նոր պրօէկտ, որի զօրութեամբ կ օ ն ց է ս ի օ ն է ր ն ե ր ի միջնորդութիւնը պիտի վերցնվի և տէրութիւնը պիտի ինքն ձեռք տայ հետազօտութիւններին, պիտի ինքն մշակի պրօէկտներ և հաշիներ, վերջապէս ինքն տոթագրութիւն բաց անէ բաժանորդական (ակցիօնէրնի) դրամագլուխ ձեռք բերելու համար: Ստորագրութենից յետոյ, ընտրվումէ կառավարութիւնը, որին տէրութիւնը յանձնումէ կ օ ն ց է ս ի ա ն:—Դարձնում ենք և մեր քաղաքային վարչութեան ուշադրութիւնը յիշված լրագրի 66-որդ համարի վրա:

* * *

Լսում ենք որ Թիֆլիսի քաղաքային վարչութեան ընդհանուր ժողովը մօտիկ օրերումս գումարվելով. պիտի զբաղվի իր նստերում զլխաւորապէս երկու առարկաներով՝ ա ռ ա ւ տ ր ա կ ա ն դ ա տ ա ր ա ն ի և ա ր ո ւ ե ս տ ա գ ո ր ծ ա կ ա ն ուսումնարանի խնդիրների քննութեամբ... Վերջապէս.... Բայց տեսնենք:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՇՎԷՅՑԱՐԻԱ

Հին կաթոլիկների կուսակիցները (անսխալականութեան հակառակորդները) բազմանում են այդտեղ: Այդ կուսակցութեանը պատկանող մի քանի նոր համայնքները հիմնվել են Շվէյցարիայի այլ և այլ կանտօնների մէջ:

„Kölnische Zeitung" լրագիրը հաղորդումէ որ Բազէլի սրբազան Լ ա շ ա եպիսկոպոսը իրան սեփականացրել է եկեղեցական փողերը, որ այդ առիթով նրա դէմ քննութիւն է բացվել և խօսք կայ անդամ, որ նրան կալանաւորեցին:

ԱՄԷՐԻԿԱ

Մարտի 4-ին Միացեալ-Նահանգների նախագահ պ. Գրանտը մտաւ իր պաշտօնակատարութեան երկրորդ շրջանը: Այդ առիթով նա ճառ կարդաց, որ շատ նշանաւոր է իր ե ր և ա կ այ ա կ ա ն և ա ն գ ո ր ծ ա գ ր ե լ ի դաղափարներով: Պ. Նախագան հաւատացած է, որ բոլոր ազգութիւնները ձգտումեն դէպի հանրապետական ձևը և օրինակ պիտի առնեն Ամէրիկայից, որ բոլոր աշխարհի համար առաջնորդ պիտի դառնայ, բացի սորանից նա աւելացնումէ՝ որովհետև առուտուրը, կրթութիւնը, մրտքերի և նիւթերի շուտ փոխանակութիւնը, թէ շոգու թէ տելեգրաֆի միջնորդութեամբ ժամանակով ամէն բան կը փոխէ, ուստի ես կարծումեմ որ Ամէնակարողը այնպէս է կարգադրում աշխարհը, որ բոլոր ազգերը ժամանակով կազմէին մի ա զ գ և մի լ է զ ու: